



Աուդիտորական Եզրակացություն

Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվաբանական Համալսարանի ՊՈԱԿ-ի
Ռեկտոր պարոն՝ Ս. Չոլյանին

Մենք ստուգել ենք Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվաբանական Համալսարանի ՊՈԱԿ-ի 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման կարգը:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ճշգրիտ հաշվապահական հաշվառման համակարգ պահելու և յուրաքանչյուր տարվա ֆինանսական հաշվետվությունները նախապատրաստելու համար:

Մեր պատասխանատվությունն է կատարված աուդիտի հիման վրա այդ հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել անկախ կարծիք:

Աուդիտն իրականացվել է գործող աուդիտորական ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք այնպես պլանավորենք և կատարենք մեր աուդիտը հիմնավոր կերպով համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, որոնք առաջացել են կեղծիքի կամ այլ սխալների հետևանքով: Ֆինանսական ինֆորմացիայի ստուգումը նշանակում է հաշվետվության պատրաստման համալիր ընկալման հասնելը, ֆինանսական տվյալների վերլուծությունը, ինչպես նաև ներառում է ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվերնումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական սկզբունքների գնահատումը, ղեկավարության կողմից կատարվող գնահատումները և ֆինանսական հաշվետվության ներկայացման գնահատումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար: Կազմակերպության 2008թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Եզրակացություն

Մեր կարծիքով, Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ճշմարտագիտորեն են արտացոլում Կազմակերպության ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման ստանդարտների:

12 ապրիլի 2010թ.
Աուդիտոր

Ս. Աբրահամյան

Տնօրեն

Որակավորված աուդիտոր



Գոր Դավթյան